ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հուլիսի 2025 թվականի N 1054-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N 550-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքի 16.2-րդ հոդվածի 7.1-ին մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի «Ոստիկանության, զինված ուժերի, ազգային անվտանգության ծառայության, քրեակատարողական ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, փրկարարական ծառայության, քննչական կոմիտեում ծառայության, դատախազության, էկոպարեկային ծառայության պաշտոնների համապատասխանությունը սահմանելու մասին» N 550-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) վերնագիրը, հավելվածի վերնագիրը «ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ» բառերից հետո լրացնել «, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ» բառերով, իսկ 1-ին կետը «էկոպարեկային ծառայության» բառերից հետո լրացնել «, պետական պահպանության ծառայության» բառերով.

2) որոշման նախաբանը «Էկոպարեկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի» բառերից հետո լրացնել «, «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16.2-րդ հոդվածի 7.1-ին մասի» բառերով.

3) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով՝

«1.1. Սույն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածով նախատեսված պաշտոնների համապատասխանությունը կիրառվում է առանձին ծառայությունները կարգավորող օրենքներին համապատասխան։».

4) հավելվածը 10-րդ սյունակից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ սյունակով՝

«

Պետական պահպանության ծառայության պաշտոններ
11
Ծառայության պետի տեղակալ (բարձրագույն խումբ)
Բաժնի պետ և նրան հավասարեցված պաշտոններ (գլխավոր խումբ)
Բաժանմունքի պետ (ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում) և նրան հավասարեցված պաշտոններ (գլխավոր խումբ)
Բաժնի պետի տեղակալ և նրան հավասարեցված պաշտոններ (ավագ խումբ)
Բաժանմունքի պետի տեղակալ (ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում), բաժանմունքի պետ (ոչ ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում) և նրան հավասարեցված պաշտոններ (ավագ խումբ)
Բաժանմունքի պետի տեղակալ (ոչ ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում) և նրան հավասարեցված պաշտոններ (ավագ խումբ)

Ավագ օպերլիազոր և նրան հավասարեցված պաշտոններ (միջին խումբ)
Օպերլիազոր և նրան հավասարեցված պաշտոններ (միջին խումբ)
Դասակի հրամանատարի տեղակալ և նրան հավասարեցված պաշտոններ (միջին խումբ)
Ենթասպաներով համալրվող պաշտոններ (կրտսեր խումբ)

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

31.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ